ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով էլեկտրական սարքերի և դրանց մասերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 10.04.2019 ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Ս. Դավթյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Վ. Ավետիսյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/ Ա. Գաբրիելյանը
Հ. Հակոբովը
Ա. Համբարձումյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. <u>Ընդունել ի գիտություն.</u>

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից /Կոմիտե/ կատարել է հարցում՝ Էլիտ Կաբել ՍՊ, Սոնիկ երիցյան ԱՁ, Ինֆինիտի Գրուպ ՍՊ, Վոլֆ Շին ՍՊ, Յունիմայն ՍՊ, ԱՁ Արմեն Հասանյան, Մաղոյան ՍՊ, Էկոմիքս ՍՊ, Ին-Վի ՍՊ ընկերությունների՝ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

1.2 Գնահատող հանձնաժողովի 02.04.2019 թ. թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 05.03.2019 ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագիրը/:

2. <u>Հանձնաժողովն արձանագրեց.</u>

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից 08.04.2019 առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է Էլիտ Կաբել ՍՊ, Սոնիկ երիցյան ԱՁ, Ինֆինիտի Գրուպ ՍՊ, Վոլֆ Շին ՍՊ, Յունիմայն ՍՊ, ԱՁ Արմեն Հասանյան, Մաղոյան ՍՊ, Էկոմիքս ՍՊ, դրական եզրակացություն /կցվում է/:

2.2 Ին-Վի ՍՊ ընկերության վերաբերյալ ստացված հարցման արդյունքում հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է բացասական եզրակացություն: Առկա է Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտում՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

2.3 Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ պահանջվող փաստաթղթերը Էլիտ Կաբել ՍՊ, Սոնիկ երիցյան ԱՁ, Ինֆինիտի Գրուպ ՍՊ, Վոլֆ Շին ՍՊ, Յունիմայն ՍՊ, ԱՁ Արմեն Հասանյան, Էկոմիքս ՍՊ, Ին-Վի ՍՊ ընկերությունների կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվել են սահմանված ժամկետում:

2.4 Մադոյան ՍՊ ընկերության կողմից սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվել:

3. <u>Հանձնաժողովը որոշեց.</u>

3.1 Էլիտ Կաբել ՍՊ, Սոնիկ երիցյան ԱՁ, Ինֆինիտի Գրուպ ՍՊ, Վոլֆ Շին ՍՊ, Յունիմայն ՍՊ, ԱՁ Արմեն Հասանյան, Էկոմիքս ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել բավարար

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

3.2 Մերժել <u>ԻՆ ՎԻ ՍՊ և Մադոյան ՍՊ ընկերությունների հայտերը</u>, հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

3.3 Համաձայն Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ/ պարբերությամբ հանձնաժողովի նիստը կասեցնել մինչև 12.04.2019 և 27-րդ չափաբաժնով Ինֆինիտի Գրուպ, Վոլֆ Շին, Յունիմայն, Էքսպրեսս Շին, Էկոմիքս ՍՊ ընկերություններին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

3.4 Հաջորդ նիստը հրավիրել 15.04.2019 ժամը 12.00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Դավթյան

անդամներ՝ _____ Վ. Ավետիսյան

_____ Ա. Պողոսյան

_____ Կ. Եսայան

_____ Ա. Համբարձումյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան